ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«07» մայիսի 2019 թվականի № 95-Ն

ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ, ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 122-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 21-ի №251-Ա որոշմամբ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման, բնական գազի փոխադրման և բաշխման ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամուտը նվազեցվում է՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված՝ տվյալ հարկային տարվա համար գործող՝ էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների հաշվարկման համար հիմք ընդունված տարեկան կորուստների տոկոսային մեծությունները չգերազանցող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 122-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի №1261-Ն որոշմամբ սահմանված կարգով փաստաթղթավորված փաստացի կորուստների չափով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերությունների վրա:

5/7/2019

VERIFIED OCSP 5/7/2019 12:20:25 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ